ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

« 25» մայիսի 2018թ. № 034/02- 562

<<ՀԵՏՔ>> ԻՆՏԵՐՆԵՏԱՏԱՅԻՆ

ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Հարգելի խմբագրություն

Ձեր 22.05.18թ. Սեդա Ղուկասյանի հեղինակած «Սպիտակի նախկին քաղաքապետը պնդում է՝ գործող քաղաքապետը 10 տարի չի զբաղվել երկրաշարժից տուժածների հարցով» վերնագրով նյութի կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀԿ նախկին անդամ, ներկայում «Ծառուկյան» խմբակցության պատգամավոր Վանիկ Ասատրյանի հնչեցրած բոլոր հայտարարությունները սուտ են, բացի տեսանյութի 2:49-րդ րոպեում հնչեցրած հետևյալ մտքից.՝ «Ինքն էլ գնում էր թաղամասերը, ասում էր սուտա ասում, ըտենց բան չկա, սուտա, ըտենց որոշում չկա»:

Հիմա էլ հայտարարում ենք, որ այո՛ սուտ է, և ոչ միայն սուտ, այլ լկտի սուտ և մենք պատրաստ ենք ձեր կողմից լրագրողական հետաքննություն անցկացնելու դեպքում ապացույցներ ներկայացնել և պարզաբանումներ տալ նրա կողմից հնչեցրած սուտ հայտարարությունների վերաբերյալ և ոչ միայն...

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ